


Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

 Վ. Կարապետյան

Ա Ո Ւ Դ Ի Տ Ի Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

08.04.2016թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 01.04.2016թ.-ի թիվ 31 կարգադրությունը, «Մայիշկայի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ում անցկացվեց 2015թ.-ի գործունեության ֆինանսական աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյանի և գլխավոր մասնագետ՝ Խ. Խաչատրյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ա. Ստեփանյանը և հաշվապահ՝ Ա. Կոստանյանը:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում.

բ/ Ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինակականության ստուգում.

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում.

դ/ Գնումների համապատասխանությունը «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջներին.

ե/ Ակտիվների գույքագրման, առկայության համապատասխանության ստուգում:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեցին՝ Վ.Կարապետյանը և Խ.Խաչատրյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Վ.Կարապետյանը ունի ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի երեք տարվա աշխատանքային փորձ: Խ.Խաչատրյանը ունի 6 ամսվա ներքին աուդիտորի փորձ:

«Մայիշկայի ԱԱՊԿ» պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ գ. Մայիշկա:

Գործունեության նպատակը՝ բնակչության առողջության առաջնային պահպանում:

Կազմակերպությունը ստեղծվել է ՀՀ կառավարության 2015թ.-ի հունվարի 15-ի «Գյուղական բնակավայրերում գործող առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմավորելու մասին» թիվ 41-Ա որոշման համաձայն ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2015թ.ի հունիսի 12-ի թիվ 53 որոշմամբ՝ «Մայիշկայի ԱԱՊԿ» ՓԲԸ-ն (պետական գրանցման համար՝ 222.120.00868) «Մայիշկայի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի վերակազմավորման եղանակով վերակազմակերպվելու միջոցով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը, որին փոխանցվում են բոլոր իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտերի համապատասխան:

« պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2015թ.

հազ.դրամ

Անվանումը	Նախատեսված	Ֆինանս.	Դրամարկ. ծախս ըստ հաշվետ.	Դրամարկ. ծախս ըստ աուդիտի	Փաստ. ծախս ըստ հաշվետվ.	Փաստ. ծախս ըստ աուդիտի	Շեղում
Ընդամենը ֆինանսավորում	20426.3	20426.3	20238.1	20238.1	20313.3	20314.9	-111.4
Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված	20426.3	18817.1	20238.1	20238.1	20313.3	20314.9	-111.4
Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ	16150		16146	16146	16016.6	16016.6	-133.4
Պարտադիր սոց. ապահով. վճարներ							0
Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից	4276.3		4092.1	4092.1	4296.7	4298.3	22
Գրասենյակային նյութեր և հագուստ	115		115	115	115	115	0
Կենցաղ և հանրային սննդի նյութեր							0
Ղեկորայք և լաբորատոր նյութեր	1370.3		1364.9	1364.9	1469.8	1469.8	99.5
Այլ ծախսեր	544		543.8	543.8	520.9	520.9	-23.1
Գործառնական և բանկ. ծառ. ծախսեր							0
Ներքին գործուղումներ	150		139	139	139	139	-11
Կապի ծառայության վճարներ	131		130.8	130.8	130.8	130.8	-0.2
Կոմունալ ծառայությունների վճար	460		430.5	467.4	458.8	497.2	37.2
Էլ. էներգիայի ծախսեր	295		282.3	319.2	298.6	336.8	41.8
Վառելիքի և տրանսպորտային ծախսեր	20		16	16	16	16	-4
Ջրնուղ կոյուղուց օգտ. վարձի վճար.	10		0	0	12	12.2	2.2
Այլ ծախսեր	135		132.2	132.2	132.2	132.2	-2.8
Ընդհանուր բնույթի այլ ծառայ.	1506		1368.1	1331.2	1462.4	1425.6	-80.4
Բանկի տոկոս							0
Տարեսկզբի դրամ. միջոցների ազատ մնաց.		247.3					0
Վճարովի ծառայութ.		310					0
Այլ ծրագրեր		1051.9					

1051.9 հազ.դրամ - սկրինինգ՝ 187.1 հազ.դրամ, զբաղվածության կենտրոն՝ 513.3 հազ.դրամ, Եղեգնաձորի ԲԿ ՓԲԸ՝ 351.4 հազ.դրամ:

Դեբիտորների և Կրեդիտորների հաշվառման աղյուսակ

	Աշխատավարձ և դրան հավ. այլ վճար.		Առողջապահական և լաբ. նյութերի վճարներ		Կապի ծառայութ.		Էլ էներգ. ծախսեր.		Եղեգնածորի և վայցի ԲԿ ՓԲԸ ներ		Այլ Դեբիտ. և Կրեդիտ պարտքեր		Ընդամենը	
	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K
ՍՈՒ.01.01.201 թ.													0.0	0.0
Շրջանառություն 201 թ.													0.0	0.0
ՍՈՒ.01.01.15թ.		22.6		115.1		10.9		68.0		123.0		3.6	0.0	343.2
Շրջանառություն 2015թ.	16146.0	16016.6	1364.9	1469.8	130.8	130.8	319.2	336.8	1065.0	1165.0	1212.2	1195.9	20238.1	20314.9
ՍՈՒ.01.01.16թ.	106.8			220.0		10.9		85.6		223.0	12.7		119.5	539.5

Առ 01.01.16թ. դրությամբ կազմակերպության դեբիտորական պարտքը կազմում է 135.3 հազ.դրամ /3.8 հազ.դրամ՝ հարկեր և պարտադիր վճարներ, 28.5 հազ.դրամ՝ ատամնաբուժական արտոնավճար և 103 հազ.դրամ՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ/:Կրեդիտորական պարտքը կազմում է 555.3 հազ.դրամ / 10.9 հազ.դրամ՝ կապի ծառայության վճար, 85.6 հազ.դրամ՝ էներգետիկ ծառայություններ, 223.0 հազ.դրամ՝ <<Եղեգնածորի ԲԿ>> ՓԲԸ-ին, 220.0 հազ.դրամ՝ <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ին /դեղորայքի արժեք/, 12.2 հազ.դրամ՝ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ և 3.6 հազ.դրամ՝ ՀԴՄ-ի սպասարկման վճար:

հազ.դրամ

Ակտիվ	Տարեվերջի դրությամբ ըստ հաշվետվության	Տարեվերջի դրությամբ ըստ աուդիտի	Շեղում
Ոչ ընթացիկ ակտիվներ, որից	21240	21240	0
Հիմնական միջոցներ			0
մն.արժ.	21240	21240	0
արժեքը	21240	21240	0
մաշվածություն			0
Ընթացիկ ակտիվներ, որից	943	946.5	3.5
Նյութեր	623	623	0
փոքրարժեք և արագամաշ առարկաներ			0
մն.արժ.	0	0	0
արժեքը			0
մաշվածություն			0
Կարճաժամ. դեբիտ. պարտքեր, որից	132	135.3	3.3
հաշ. տրված կանխ.վճ.գծ.			0
հաշվ. գնորդ. և պատ. հետ			0
հաշվ. սոց. ապահ. և ապահովության գծով			0
հաշվարկներ անձնակազմի հետ	103	103	0
հաշվարկներ անձնակազմի հետ նյութական վնասի հատուցման գծով			0
հաշվարկներ բյուջեի հետ	29	32.3	3.3
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
հաշվ տարբ. դեբիտ. հետ			0
Ղրամական կան միջոցներ, որից	188	188.2	0.2
դրամարկը	67	67.2	0.2
հաշվարկային հաշիվ	121	121	0
Հաշվեկշիռ	22183	22186.5	3.5
Պասիվ			0
Սեփական կապիտալ որից՝	10600	10603.2	3.2
Լրացուցիչ կապիտալ	10600	10603.2	3.2
Հաշվետու տար. չօգ. զուտ շահ.			0
Նախ. կար. չօգ. զուտ շահ.			0
Եկամ. վերաբ. շնորհ.	10672	10672	0
Կարճ. ժամկ. կրեդ. պարտքեր	555	555.3	0.3
այդ թվում			0
հաշվարկ. մատակ. և կապալ. հետ	220	443	223
հաշվարկներ բյուջեի հետ			0
Հաշվ. սոց ապահ. և ապահով. գծ.			0
այդ թվում տույժեր և տուգանքներ			0
Հաշվարկներ անձնակազմի հետ եկամուտների վճարման գծով			0
հաշվարկներ տարբ. կրեդիտորների հետ	108	112.3	4.3
հաշվարկներ հաշվետու անձանց հետ	227		-227
Կարճ. ժամկ. այլ պասիվներ որից	356	356	0
գալիք ժաման. եկամուտներ	356	356	0
Հաշվեկշիռ	22183	22186.5	3.5

Մեր կողմից աուդիտի արդյունքներով կազմվել է հաշվեկշիռ, որը հիմք է տալիս եզրակացնելու՝ հաշվեկշիռը տալիս է կազմակերպության հաշվեկշռի ճշմարիտ և իրական պատկերը:

**Դրամական միջոցների հոսքերի մասին
հաշվետվություն**

առ. 01.01.2015թ. - առ 01.01.2016թ.

Ձև N 4
հազ.դրամ

Ցուցանիշների անվանումը	Տող	Գումարն ըստ հաշ.	Գումարն ըստ աուդիտի տվյալների	Շեղում
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	010	247.3	247.3	0.0
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր				
Արտադրանքի աշխատանքների, ծառայությունների իրացումից	020	18817.1	18817.1	0.0
Ապրանքների իրացումից	030			0.0
Ընթացիկ այլ ակտիվների իրացումից	040			0.0
Ստացված կանխավճարներից	050			0.0
Կարճաժամկետ ֆինանսական ներդրումների դիմաց հաշվարկված եկամուտներից	060			0.0
Գործառնական այլ գործունեությունից	070	1361.9	1361.9	0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	080	20179.0	20179.0	0.0
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր				
Ձեռք բերված արտադրական պաշարների դիմաց	090			0.0
Ապրանքների ձեռք բերման դիմաց	100	1479.9	1479.9	0.0
Կատարված աշխատանքների մատուցված ծառայությունների դիմաց	110	2612.2	2612.2	0.0
Տրված կանխավճարներ	120			0.0
Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դիմաց	130	16146.0	16146.0	0.0
Սոցիալական ապահովագրության և ապահովության նպատակով	140			0.0
Առհաշիվ տրված գումարներ	150			0.0
Վճարումներ բյուջե	160			0.0
Գործառնական այլ գործունեության նպատակով	170			0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	180	20238.1	20238.1	0.0
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	190	-59.1	-59.1	0.0
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ		188.2	188.2	0.0

Մեր կողմից դրամական հոսքերի աուդիտ է իրականացվել, որը հիմք է հանդիսանում կազմակերպության կողմից ստացված եկամուտների և կատարված դրամական ծախսերի վերաբերյալ ճշմարիտ կարծիք կազմելու համար:

Կատարվել է կազմակերպության 2015 թ.-ի ֆինանսական և տնտեսական գործունեության վերլուծություն.

Կազմակերպության հաստիքային միավորների թիվը՝ 13:

Կազմակերպության աշխատակիցների թվաքանակը՝ 16 տարվա սկզբին, 17՝ տարվա վերջում

/պրակտիկանտ բուժքույր նոյեմբերի 1-ից 3 ամիս ժամկետով, ֆինանսավորումը տրվում է գբադվածության կենտրոնից/:

Ընդամենը նախատեսված դրամական եկամուտներ՝ 20426.3 հազ. դրամ, փաստացի կատարում՝ 20426.3 հազ.դրամ: Որից՝

-պետական պատվերով նախատեսված՝ 18817.1 հազ.դրամ, փաստացի կատարում՝ 18817.1 հազ. դրամ:

-վճարովի ծառայություններ՝ նախատեսված՝ 310.0 հազ. դրամ, փաստացի կատարում՝ 310.0 հազ. դրամ: Նախորդ բյուջետային տարվա նկատմամբ մուտքերը նվազել են 107.0 հազ.դրամի չափով:

- այլ եկամուտներ՝ նախատեսված՝ 1051.9 հազ.դրամ, փաստացի՝ 1051.9 հազ.դրամ:

- տարվա սկզբի դրամական մնացորդ՝ 247.3 հազ.դրամ:

- տարվա վերջի դրամական մնացորդ՝ 188.2 հազ.դրամ:

01.01.2016թ.-ի դրությամբ կազմակերպության դեբիտորական պարտքը կազմում է 135.3 հազ. դրամ:

01.01.2016թ.-ի դրությամբ կազմակերպությունն ունի 555.3 հազ.դրամ կուտակված կրեդիտորական պարտք, որը 231.8 հազ.դրամի չափով ապահովված չէ դրամական միջոցներով: Կազմակերպությունն աշխատել է 32.0 հազ.դրամ շահույթով: Կազմակերպությունը սպասարկում է 4032 բնակիչ: Համաձայն գլոբալ բյուջեի հաշվառված բնակիչների թիվը կազմում է 4032 բնակիչ, որից մեծահասակներ՝ 3088 բնակիչ և մինչև 18 տարեկաններ՝ 944 բնակիչ, որը ընտանեկան բժիշկների աշխատավարձի հաշվարկի հիմք է հանդիսացել: Մեր հաշվարկով հաշվառման քարտերը ամբողջությամբ առկա են, ինչպես նաև նրանցում այցելությունների մասին գրանցումները:

<<Մալիշկայի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ում ըստ հաշվետվության, եկամուտների 93.3 տոկոսը ձևավորվել է պետական պատվերի շրջանակներում, 1.5 տոկոսը գոյացել է վճարովի ծառայություններից, 5.2 տոկոսը՝ այլ եկամուտներից: Ծախսումներում աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարների տեսակարար կշիռը կազմում է 79.8 տոկոս /ողջամիտ է համարվում 70 տոկոս միջակայքը/, դեղորայք և լաբորատոր նյութեր հոդվածով՝ 6.7 տոկոս, այլ ծախսերը՝ 13.5 տոկոս: Անհրաժեշտ է բարձրացնել վճարովի ծառայությունների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ:

Աուդիտի է ենթարկվել պետական պատվերի շրջանակներում իրականացված բժշկական ծառայությունների արժանահավատությունը: Կատարվել է բժշկական քարտերի ընտրանքային աուդիտ:

Եզրակացություն: Պետական պատվերի շրջանակներում իրականացված բժշկական ծառայությունները արժանահավատ են:

Իրականացվել է դեղորայքի և վիրակապական նյութերի գնումների գործընթացի աուդիտ համապատասխանության աուդիտ և կատարողականի աուդիտ:

Համապատասխանության աուդիտ: Գնման գործընթացը ներառում է գնումների պլանավորումը, գնումների նախապատրաստումը, պայմանագրի կնքումը: Առկա է գնումների պլանը, որը սահմանված կարգով կազմվել է և ներկայացվել ՀՀ Վայոց ձորի մարզպետարան:

Գնումների նախապատրաստում: Սահմանվել է գնումները իրականացնել ՇՀ գնման ընթացակարգով: Գնումների նախապատրաստման համար մարմնի ղեկավարը սահմանել է գնումների համակարգող, պատասխանատու ստորաբաժանում, գնահատող հանձնաժողով: Կիրառվել է ՀՀ կառավարության գնումների գործընթացի կազմակերպման մասին թիվ 168-Ն որոշման 3-րդ գլխի 7-րդ մասի պահանջները:

Հանձնաժողովը իր առաջին նիստում հաստատել է հրավերի տեքստերը: ՇՀ-ում ներառված բոլոր հնարավոր մասնակիցներին ուղարկվել է գնման հրավեր, որում ներառվել են ապրանքների տեխնիկական բնութագրերը, անվանացանկը: Սահմանված կարգով գնման հայտ են ներկայացրել 5 ընկերություն՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ, «Արմեն Ֆարմ» ՍՊԸ, «Ռիխտեր Լամբրոն» ՍՊԸ, «Վազա Ֆարմ» ՍՊԸ և «Արֆարմացիա» ՓԲԸ: Հայտերը գրանցվել են գրանցամատյանում: Հայտերի բացման օրը և ժամին հայտերը բացվել են հանձնաժողովի նիստում: Հանձնաժողովը արձանագրել է նշված ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկները, գնային առաջարկները տարանջատել չափաբաժինների նվազագույն գնային առաջարկի սկզբունքով և չափաբաժիններով որոշել հաղթող ընկերություններին՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Հաղթող 4 ընկերություններին ուղարկվել է համապատասխան գրություններ, ըստ չափաբաժինների հաղթող ճանաչվելու մասին պայմանագիր կնքելու համար, կցելով պայմանագրի նախագիծը, միակողմանի տուժանքի պայմանագրի առկայության պայմաններում: Ընկերությունների կողմից ներկայացվել է միակողմանի տուժանքի մասին համաձայնությունը, որոնց առկայության պայմաններում կնքվել են համապատասխան գնման պայմանագրեր:

Կատարողականի աուդիտ: Գնումներ իրականացնելու համար կազմվել են գնման և վճարման ժամանակացույցեր:

«Արֆարմացիա» ընկերության հետ կնքվել է 148.6 հազ.դրամի գնման պայմանագիր, գնվել է 106.1 հազ.դրամի դեղորայք, «Նատալի Ֆարմ» ընկերության հետ կնքվել է 1087.8 հազ.դրամի գնման պայմանագիր, գնվել է 920.7 հազ.դրամի դեղորայք, «Ռիխտեր Լամբրոն» ընկերության հետ կնքվել է 332.1 հազ.դրամի գնման պայմանագիր, գնվել է 211.4 հազ.դրամի դեղորայք և «Վազա Ֆարմ» ընկերության հետ կնքվել է 148.6 հազ.դրամի գնման պայմանագիր, գնվել է 104.3 հազ.դրամի դեղորայք: Փոխադարձ համաձայնությամբ կատարվել է 1333.5 հազ. դրամի գնում, որը կազմակերպության բնականոն գործունեության վրա ազդեցություն չի ունեցել:

Մեր գնահատմամբ գնումները համապատասխանում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Վայոց ձորի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանս և գլխավոր մասնագետ՝ Խ.Խաչատրյանս իրականացրեցինք «Մայիշկայի ԱԱՊԿ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2015թ.-ի բյուջետային տարվա ֆինանսական աուդիտ առ 01.01.2016թ. դրությամբ: Հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվություն է կրում կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ: Աուդիտն անցկացրեցինք աուդիտի ստանդարտներին և գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորենք և իրականացնենք, որպեսզի ունենանք ողջամիտ հավաստում, որ ֆինանսական հաշվետվությունները և հաշվապահական հաշվառման փաստաթղթավորումը և ձևակերպումները արժանահավատ են, էական խեղաթյուրումներից զերծ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքները:

Մեր կողմից կատարվել է կազմակերպության հաշվապահական հաշվառման ուսումնասիրություն, ֆինանսական և գործառական տեղեկատվության ստուգում, տնտեսական գործունեության նվազագույն ծախսերով իրականացման ուսումնասիրություն, ինչպես նաև օրենքների և այլ իրավական ակտերի, կազմակերպության ղեկավարության քաղաքականության, հրահանգների և ներքին այլ պահանջների ուսումնասիրություն: Իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները կազմվել են սահմանված ձևով ֆինանսական հաշվետվությունների հիմունքների պահանջներին համապատասխան: Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների տվյալների արժանահավատությունը գնահատվել է աուդիտի արդյունքներով, որը արտահայտվել է աուդիտի հաշվետվության մեջ:

Արձանագրված թերություններ և խախտումներ:

Առ 01.01.2016 թ.-ի դրությամբ կազմակերպության դրամական մնացորդը կազմել է 188.2 հազ.դրամ, դեբիտորական պարտքը՝ 135.3 հազ.դրամ, կրեդիտորական պարտքը՝ 555.3 հազ.դրամ: 231.8 հազ.դրամի կրեդիտորական պարտքը դրամական միջոցներով ապահովված չէ:

Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարների տեսակարար կշիռը բարձր է, որի արդյունքում կուտակվել է դրամական միջոցներով չապահովված կրեդիտորական պարտքեր:

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի նշված թերությունները վերացնելու համար տրվեց համապատասխան խորհրդատվություն:

Առաջարկվեց ՊՈԱԿ-ի տնօրենին՝

ա/ Ապահովել տնտեսող, օգտավետ գործառույթների առկայություն, որը հնարավորություն կտա բացառել դրամական միջոցներով չապահովված կրեդիտորական պարտքերի առկայությունը: (Առաջարկությունների դասակարգման միջին չափանիշ):

բ/ Վերանայել հաստիքացուցակը և կատարել հաստիքային միավորների հնարավոր կրճատումներ:
(Առաջարկությունների դասակարգման միջին չափանիշ):

Առաջարկությունների կատարման վերաբերյալ մեկամսյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝

Ներքին աուդիտոր՝

<<Մալիշկայի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Հաշվապահ՝

Վ. Կարապետյան

Խ. Խաչատրյան

Ա. Ստեփանյան

Ա. Կոստանյան